ՀՏԴ 94 (479.243) *Պատմություն*

Հրանտ Աբրահամյան ,
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ,
պ.գ.դ., պրոֆեսոր առաջատար գիտաշխատող

ԱՐՑԱԽԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ (1920 ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ)

1920 թ. մարտ-ապրիլին Ադրբեջանի բռնատիրական քաղաքականության դեմ Արցախ-Զանգեզուրում տեղի է ունեցել ազգային-ազատագրական պայքար: Որոշ հայ, թուրք և այլազգի հեղինակներ այդ պայքարը որակավորել են իբրև Ադրբեջանի դեմ ուղղված «ապստամբություն» կամ «խռովություն», որը հակագիտական է, ոչ ճիշտ: Իրականում, Արցախ-Զանգեզուրի պայքարը ազերի բարբարոսների դեմ հանդիսացել է ինքնապաշտպանական և ազգային գոյատևման պայքար: Քանի որ Արցախ-Զանգեզուրը երբեք Ադրբեջանի կազմի մեջ չէին եղել, դրանք մայր Հայաստանի մաս էին կազմել:

Բանալի բառեր *- ապստամբություն, իշխանություն, նահանգապետ, զորանոց, Արցախ, կայազոր, Զանգեզուր, կառավարություն, պայմանագիր, ինքնապաշտպանություն, պայքար*

Hrant Abrahamyan, Institute of History of NAS RA ,
Doctor of Historical Sciences,
Professor, Leading Researcher

ARTSAKH ON THE EVE OF THE ESTABLISHMENT OF THE SOVIET POWER (MARCH-APRIL 1920)

In March - April 1920 a national-liberation struggle took place in Artsakh-Zangezur against the dictatorial policy of Azerbaijan. Some Armenian, Turkish and foreign authors qualified the struggle as "rebellion" or "riot" against Azerbaijan, which is which is anti - scientific and wrong. In fact, the struggle of Artsakh-Zangezur against the Azerbaijani barbarians was a self-defense and national struggle for survival. Because Artsakh and Zangezur have never been into the territory of Azerbaijan, the ones were part of Armenia.

Key words*: rebellion, power, governor, barracks, Artsakh, Zangezur, garrison, government, contract, self-defense*

Грант Абрамян, Институт истории НАН РА,
доктор исторических наук,
Профессор, ведущий научный сотрудник

АРЦАХ НАКАНУНЕ УСТАНОВЛЕНИЯ СОВЕТСКОЙ ВЛАСТИ (МАРТ-АПРЕЛЬ 1920 г.)

В марте - апреле 1920 года в Арцах -Зангезуре произошла национально-освободительная борьба против диктаторской политики Азербайджана. Некоторые Армянские, турецкие и иностранные авторы квалифицировали эту борьбу как «мятеж» или «бунт» против Азербайджана, который является антинаучным и неправильным. Фактически, борьба Арцаха-Зангезура против азербайджанских варваров была самозащитой и национальной борьбой за выживание. Поскольку Арцах и Зангезур никогда не были на территории Азербайджана, те были частью Армении.

Ключевые слова: *восстание, власть, губернатор, казармы, Арцах, Зангезур, гарнизон, правительство, договор, самооборона*

Աբրահամյան Հրանտ Բարսեղի, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ,
պ.գ.դ., պրոֆեսոր առաջատար գիտաշխատող

Հայ, թուրք, այլազգի բազմաթիվ հեղինակներ առիթ են ունեցել գրել 1920 թ. մարտ-ապրիլին Արցախ - Զանգեզուրում տեղի ունեցած իրադարձությունների շուրջ: Հեղինակների մի մասը այն բնորոշել է որպես Ադրբեջանի բռնատիրության դեմ ուղղված ապստամբություն-խռովություն, ոմանք էլ ընդգծում են, որ դա եղել է ինքնապաշտպանություն: Ժամանակակիցներից Եղիշե

Իշխանյանը 1920 թ. մարտ-ապրիլին տեղի ունեցած իրադարձությունները անվանել է «Ղարաբաղի ապստամբություն»[1]: Սիմոն Վրացյանը՝ մարտի 22-ի լույս 23-ի գիշերը բնորոշել է «....ապստամբություն Ադրբեջանի դեմ....»[2]: Պրոֆեսոր Համլետ Հարությունյանը՝ «Համաժողովրդական ապստամբություն Լեռնային Ղարաբաղում»[3], Հրանտ Աբրահամյանը՝ «Զինված ապստամբություն Արցախում»[4], Վահրամ Բալայանը՝ «Համաժողովրդական ապստամբություն Լեռնային Ղարաբաղում»[5], Միքայել Թումանյանը՝ "Вооруженное выступление карабахцев...."[6] և այլն:

Հարություն Թումյանը գրել է, որ «Ղարաբաղի զինված ուժերը անցնելով Ռուբիկոնը», զինված հարձակումներ կատարեցին թուրքական պահականոցների վրա Ասկերանում և զորանոցների վրա՝ Խանքեդիում ու Շուշիում»[7]: Մինչդեռ պետք է շեշտվեր, որ դա եղել է ինքնապաշտպանություն: Արցախ - զանգեզուրցիները չէին կարող ապստամբել և խռովություն բարձրացնել Ադրբեջանի Հանրապետության դեմ, որովհետև չէին մտնում նրա կազմի մեջ: Եթե դա այդպես է եղել, նրանք ինչպես կարող էին ապստամբություն-խռովություն բարձրացնեին: Թուրք պատմա- շինարարները օգտագործելով այդ հանգամանքը, աղաղակում են, թե Արցախ-զանգեզուրցիները ապստամբել և խռովություն են բարձրացրել իրենց պետության դեմ, որը ստիպված էր եղել ուժով ճնշել այն: Օգոստոսյան ժամանակավոր պայմանագրի համաձայն Արցախը ժամանակավոր գտնվում էր Ադրբեջանի տարածքում, բայց երբեք նրա մաս չէր կազմում: Դա փորձելով ժխտել ազերի հեղինակ Իլգար Նիֆտալիևը հայտարարում է, թե 1920 թ. Նովրուզ Բայրամի օրը հայկական ջոկատները հարձակման են անցել ԱՊՀ բանակի Շուշիի ռազմական կայազորի վրա և ադրբեջանական զորամասերը ապրիլի 2-ին նրանց դուրս են մղել Ասկերանից: Ապա ավելացնում է, որ Ղարաբաղում բռնկված ապստամբությունը, որը հրահրել է Հայաստանի դաշնակցական կառավարությունը տարածքում իրավիճակը սրելու համար, նպատակ է ունեցել Ղարաբաղը կտրել Ադրբեջանից ու խախտել 1919թ. օգոստոսի 22-ի պայմանագրի կարևորագույն կետերը[8]: Մինչդեռ ակնհայտ է, որ 1919 թ. օգոստոսի 22-ի պայմանագրի ամենակոպիտ խախտողները հանդիսացել են Ադրբեջանի կառավարությունը և նահանգապետ Խոսրովբեկ Սուլթանովը: Մեկ ուրիշ հեղինակ՝ Էլդար Իսմաիլովը, գրում է թե 1920 թ. Նովրուզ Բայրամի տոնակատարության գիշերը Ղարաբաղում տեղի է ունեցել խռովություն և գրավել են Ասկերանի անցուղին: Այդ խռովությունը ճնշելու համար Ղարաբաղ է ուղարկվել ազգային բանակի մի մասը գեներալ Գ. Մելիմովի գլխավորությամբ և ապրիլի 3-ին անցնելով հարձակման, Շուշին ազատել են խռովարարներից[9]: Տեսեք. 1920 թ. քաղաքում ոչ մի հայ չէր մնացել, բնակչության մեծամասնությունը սրի էր մատնվել, մնացածը՝ հեռացել գավառ կամ մեկնել երկրամասից: Քաղաքի բոլոր փողոցները և 900 ջրոհները լի էին դիակներով: Հարց է առաջանում. այդ ավազակախմբերը քաղաքը ումի՞ց պետք է ազատեին, իրենց դահիճ թուրքի՞ց:

Այսպես. 1920 թ. մարտ-ապրիլին Արցախում տեղի ունեցածը ապստամբությու՞ն էր, խռովությու՞ն, թե՞ ինքնապաշտպանություն: Ինչպես տեսանք, թուրք հեղինակները միաբերան պնդում են, թե դա եղել է Դեմոկրատական Ադրբեջանի դեմ ուղղված ապստամբություն և խռովություն, հայ հեղինակները՝ ինքնապաշտպանություն: Քանի որ Ադրբեջանի բռնատիրությունը հարձակման էր անցել Արցախ-Զանգեզուր ընդհանուր ճակատով, տարբեր տեղերից ծագումով արցախ-զանգեզուրցիները վերադառնում էին երկրամաս, մտնում ինքնապաշտպանության ջոկատներ և մարտնչում հայրենիքի պաշտպանության համար:

---

[1] Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ 1917-1920, Ե., 1999, էջ 575:
[2] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1998, էջ 395-396:
[3] Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921, Ե., 1996, էջ 210:
[4] Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա, 1917-1923 , Ե., 2003, էջ 178:
[5] Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ,2012, էջ 95:
[6] Туманян М., Дипломатическая история Республики Армения, 1918-1920 гг. , Ер., 2012, стр. 280.
[7] Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920 թթ., Ե., 2008, էջ 281:
[8] Нифталиев, И., Азербайджанская ССР в. экспансионистских планах армян (20-е годы XX века), Баку , 2010 стр. 291.
[9] Исмаилов Э., Очерки по истории Азербайджана, Москва, 2010, стр. 198.

Ակնհայտ է, որ 1919 թ. օգոստոսի 22-ի ժամանակավոր պայմանագրի բազմաթիվ կետեր խախտել էր Ադրբեջանի կառավարությունը և նահանգապետությունը: Անցած վեց ամսում Ադրբեջանի կառավարությունը 90 վագոն[1] զենք ու զինամթերք էր տեղափոխել Արցախ և զինել ռազմավարական կետերում տեղակայված զորամասերը: Ադրբեջանի կառավարությունը, ի դեմս նահանգապետ Խոսրովբեկ Սուլթանովի, հանձնարարություն ուներ գրավել Արցախ-Զանգեզուրը և միացնել Ադրբեջանին: Եվ դա պետք էր տեղի ունենար Նովրուզ Բայրամի օրերին:

Արցախ-Զանգեզուրը դա զգում էր և նախապատրաստվում ինքնապաշտպանության: Հայաստանի Հանրապետությունը ոչ մի նպատակ չուներ արցախցիներին կոչ անելու Ադրբեջանի դեմ ապստամբելու համար: Ուրիշ հարց է, երբ Արցախ-Զանգեզուրը տեսնելով Ադրբեջանի նախապատրաստական աշխատանքները՝ երկրամաս ներխուժելու համար, ինքնակամ աշխատանքներ էին տանում իրենց ինքնապաշտպանությունն ամրապնդելու համար: Մինչդեռ, Ադրբեջանի կառավարությունը և նահանգապետ Խ. Սուլթանովը, խախտելով 1919 թ. օգոստոսի 22-ի ժամանակավոր պայմանագիրը, իրենց ամենաառաջին խնդիրը համարում էին հայությանը զինաթափելը: 1920 թ. մարտի 23-ի նախօրյակին, Սուլթանովը հրաման է ստորագրում և Շուշիի հայությանը երեք օր ժամանակ է տալիս զինաթափվելու համար: Մինչ այդ երկրամասի վիճակը խիստ բարդացել էր փետրվարի 28 -ից մինչև մարտի 5-ը տեղի ունեցած արցախահայության 8 -րդ համագումարի կողմից Ադրբեջանին ենթարկվելու կառավարության պահանջի մերժումի հետևանքով:

Հարություն Թումյանը գրել է, որ կռիվների վերջին օրերում Ղարաբաղի դեմ հանված ադրբեջանական կանոնավոր և անկանոն զինված ուժերի ընդհանուր թիվը, առանց չափազանցության, կազմում էր ոչ պակաս, քան 80 հազար մարդ: Ադրբեջանը որոշել էր այդ ուժերն օգտագործել «Հայկական Ղարաբաղը քարտեզից ընդմիշտ ջնջելու համար»[2]: Արագորեն կազմակերպվում էին «թաթար-քրդերի ավազակների խոշոր խմբեր», որոնք պետք է հայերի կոտորածներ իրագործեին Խանքեդում և Աղդամում: Երևանի արցախցիների հայրենակցական ընկերության նախագահ Գ. Բալայանը հայոց նախարար-վարչապետին ուղարկած նամակում նկարագրում է, որ Եվլախ-Շուշի ճանապարհին սպանում էին հայ ուղևորներին, ուժ են գործադրում կանանց նկատմամբ, քշում են անասունները, թուրքերը Արցախի հայերին հայտարարել են տնտեսական բոյկոտ: Գ. Բալայանը Հայաստանի կառավարությունից խնդրում է վճռական քայլեր ձեռնարկել դադարեցնելու թուրք էմիսարների և Ադրբեջանի շովունիստների այդ վայրագությունները[3]: Արցախահայության ութերորդ համագումարի բանաձևում ընդգծվել է, որ նման բնույթի ավազակությունների կրկնությունը արցախահայությանը կստիպի իր կյանքն ու պատիվը պաշտպանելու համար դիմել համապատասխան միջոցների:

1920 թ. մարտի կեսերը քաղաքից գավառ էր տեղափոխվել հայերի մի մասը, հայոց ազգային խորհուրդը և հայկական մյուս մարմինները: Շուշիի ճակատագիրը մտահոգում էր ողջ հայությանը: Նրանք բողոք-նամակներով Ադրբեջանի մահմեդականներից պահանջում էին հանգիստ թողնել Շուշիի հայությանը: Սակայն Ադրբեջանական մուսավաթական կառավարությունը այդ բողոքները թողնում էր անհետևանք և քաղաքի մահմեդականությանը նախապատրաստում բնաջնջել հայությանը:

1920 թ. մարտյան այդ օրերին քաղաքի հայությանը սատար կանգնելու համար, գավառից քաղաք են ուղարկվում մի քանի փոքր զինված ջոկատներ, որոնք, սակայն, անբավարար էին և չէին կարող պաշտպանել հայությանը:

Քաղքաը շիկացած էր: Հայերը սարսափի մեջ էին: Ժամանակի մամուլը գրել է, որ Շուշիի գեհենը սկսելու համար թուրքերը առիթ էին որոնում: Սուլթանովը արագացնում էր հայերի զինաթափումը: Վերջինս պնդում էր, թե հակառակ դեպքում դա կկատարի բանակի օգնությամբ: Քաղաքի հայերը հրաժարվել էին կատարել նահանգապետի այդ լկտի պահանջը, լավ հասկանալով, թե ինչ է սպասում իրենց:

Մարտի 22-ի օրվա վերջից սկսած Սուլթանովի պահանջով զինվորական պահակախմբերը սկսում են շրջել հայկական թաղամասում և խուզարկել բնակարանները: Մի պահակախումբ թուրք

[1] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 213:
[2] Թումյան Հ., նշվ., աշխ., էջ 283:
[3] Нагорный Карабах в 1918-1923 гг., сборник документов и материалов, Ер., 1992, стр. 376-377.

սպայի գլխավորությամբ ներ է խուժում մի հայ ընտանիք և պահանջում զենքը հանձնել: Ժամանակի մամուլի վկայությամբ թուրք սպան տաքարյուն հայ երիտասարդի նկատմամբ գոռոզ տոնով քստմնելի առաջարկություն է անում երիտասարդի գեղեցիկ հարսին և կամենում է ձեռք տալ: «Երիտասարդը, - շարունակում է թերթը...., - չհանդուրժելով նման խայտառակություն, ատրճանակով տեղն ու տեղը գնդակահարում է սպային: Կատաղած ասկյարները ի պատասխան սպանում են երիտասարդին, հարսին, մորը, քրոջը և աղաղակելով դուրս նետվում փողոց ու թրքական ուժերին հավաքի կանչում, թե հայերը կոտորում են թրքերին...»: Այսպիսով, քաղաքի մահմեդականները, որոնք նախորոք Սուլթանովից նավթ և լուցկի էին ստացել, սկսում են «հրաձգել հայերի տները, և այդպիսով կոտորածը սկսում է»[1]: Ըստ ժամանակի մամուլի վկայության, թուրք ասկյարները և քաղաքի բիրտ մահմեդականները մի ամբողջ օր արյունալի խրախճանք են կատարում. քաղաքի հայությանը սրի մատնում, շինությունները հրդեհում, մարդկանց ամբողջ սեփականությունը թալանում:

Շուշիի այդ սարսափելի կոտորածի և ողբերգության մասին շատերն են անդրադարձել: Նրանք զոհերի թիվը ցույց են տվել 8, 9, նույնիսկ 20 հազար: Սակայն գոյություն ունի վիճակագրություն: Հայտնի վիճակագիր, ծննդով արցախեցի Բախշի Իշխանյանը, ուսումնասիրելով Շուշիի ցեղասպանությունը, զոհերի թիվը ցույց է տվել 8988[2]: Քաղաքի հայկական թաղամասն ունեցել է շուրջ 7000 շինություն: Այդ ամենից հազիվ մի քանի շենք է փրկվել՝ զորանոցները, Ռեալականը, Թեմականը և այլն: Հայաստանի նախարար - վարչապետ Ալ. Խատիսյանը 1920 թ. ապրիլի 3-ին զեկուցումով հանդես գալով հանրապետության պառլամենտի 78-րդ նիստում, հանգամանորեն ներկայացրել է 1920 թ. մարտ-ապրիլին տեղի ունեցած իրադարձությունները և հատուկ ընդգծել, որ դարաբաղցիները չեն ապստամբել Ադրբեջանի իշխանությունների դեմ, այդ մասին Ադրբեջանում ինչ-որ ասվում է, կեղծիք է, խաբեբայություն: Իրենց դիմակը թաքցնելու համար դիմում են կեղծարարության: Տեղական հայերը, կտրված մայր հայրենիքից, «ամեն անգամ հերոսական դիմադրություն են ցույց տալիս Ադրբեջանի հարձակումներին....»: Մարտի սկզբներին արդեն պարզվեց, որ ադրբեջանական զորքերը զինաթափում են Ղարաբաղի հայերին և կատարվում են այնպիսի դեպքեր, որոնք ընդհանուր հարձակում սկսվելու նախանշաններ են հանդիսանում: Եվ ահա մարտի 22-ին, գիշերվա ժամը 3-ին, Ադրբեջանի կանոնավոր զորամասերը՝ ռազմական մեծ պատրաստությամբ, թաթար խուժանի հետ միասին սկսել են հարձակումներ կատարել Ղրաբաղի վրա:

Ադրբեջանի կառավարությունը իր սովորության համաձայն, թաքցնելով եղելությունը, աշխատում է համոզել, որ այդ օրը Ղարաբաղը ապստամբեց իր իշխանության դեմ, բայց անհերքելի փաստով ապացուցված է արդեն, որ այդտեղ ոչ մի ապստամբություն տեղի չի ունեցել. հարձակումը սկսվել է Ադրբեջանի ձեռքով և կանխամտածված ծրագրով, իսկ տեղական ժողովուրդը միայն ինքնապաշտպանության կռիվ է մղել՝ իր գոյություն փրկելու համար»[3]:

Այսպիսով, Ադրբեջանի իշխանությունների կողմից 1920 թ. մարտ-ապրիլին Արցախում կատարվածը եղել է ցեղասպանություն, որը քաղաքական գնահատական չի ստացել և դրա կազմակերպիչները պատասխանատվության չեն ենթարկվել:

[1] «Աշխատավոր», թ. 10, 16.04.1920:
[2] «Հառաջ», 1 ապրիլի, 1920:
[3] «Հառաջ», թ. 73, 07. 04.1920: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրությունները 1918-1920 թթ., Ե., 2010, էջ 479-480, Нагорный Карабах..., стр. 410-413: